

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

ՅՈՎՀ. ՅԱԿՈԲԵԱՆ, ԱՂԲԻԻՐ-  
ՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԴԻ-  
ԿՈՎԿԱՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ. —  
Ուղեգրութիւններ, հատոր Ա.  
ԺԳ — ԺԶ դար ( 1253—1582 ) :  
Հրատ. ՄԵԼՔՆԵԱՆ ՖՈՆԴԻ, Երե-  
ւան, 1932 :

Յունաստանն ու Հռոմը շատ  
հին ժամանակներից արդէն ծա-  
նօթ էին Արեւելիին : Այդ ծանօ-  
թեան մեծ չափով նպաստեցին  
Աղեփսանդր Մակեդոնացու ար-  
շաւանքները, յայն վարձկան զոր-  
քերի ծառայութիւնը պարսից  
թագաւորների մօտ, գիտնական-  
ների ֆանապարիորդութիւնները  
եւ յետոյ՝ առեւտուրը Արեւելիի  
հետ, որտեղից ստացում էին  
ազնիւ ֆարքեր, քանգագին կեր-  
պաններ, համեմներ եւ անուշա-  
հոտութիւններ, որոնց այնքա՛ն  
սիրահար էր ազահ Եւրոպացին :  
Դասական հնութիւնից մեզ հա-  
սել են արեւելեան երկրների բազ-  
մաթիւ նկարագրութիւններ, ո-  
րոնք սակայն Հնդկաստանից այն  
կողմը չեն անցնում :

Միջին դարերում իտալացի  
վաճառականներն էին գլխաւո-  
րապէս վենետիկցիք ու ջենովա-  
ցիք, որ ընդարձակ ու կանոնա-  
ւոր առեւտրական կապեր ստեղ-  
ծեցին Արեւելիի հետ՝ գրասեն-  
եակներ ու գործակալութիւններ  
հաստատելով Միջերկրական ու  
Սեւ ծովերի արեւելեան եզերք-  
ներից : Իտալացի վաճառական-  
ների շնորհիւ այլազան տեղեկու-  
թիւններ հասան Եւրոպա Արե-  
ւելիի հեֆեաթային հարստու-

թիւնների մասին եւ մեծապէս  
գարկ տւին Արեւելի ֆամբորդե-  
լու եւ հարուստ աւար բերելու  
տենչին : Խաչակրաց արշաւանք-  
ների գաղափարի յաջողութիւնը  
արդիւնք էր հէնց այդ տրամա-  
դրութեան. վերջին հաշուով, այդ  
արշաւանքները յարատեւ աւա-  
րառութեանց ու քաւանների մի  
շարք էին : Խաչակրաց արշաւանք-  
ները կատարում էին Հռոմի  
պապական արքայի հովանաւո-  
րութեան տակ. սրա վրա էր ըն-  
կնում նրանց գաղափարախօսա-  
կան մասը : Հռոմը, որ երբեք  
չի երագել մահմետական տար-  
րերը ֆրիստոնեայ դարձնելու  
մասին, գլխաւորապէս ձգտում  
էր իրեն հետ կապել արեւելեան  
ֆրիստոնեաների՛ն, որոնց շոյ-  
լում էր մեծամեծ, բայց երբեք  
չիրագործող խոստումներ, թէ  
նրանք մահմետականների լծի  
տակից կազաւունեն, եթէ նախօ-  
րօք հռովմէադաւանութիւն ըն-  
դունեն : Պապերի այս ձեւի գոր-  
ծունէութիւնից առանձնապէս  
տուժեցին հայերը :

Արեւելիում ֆրիստոնէութիւն  
ֆարգելու համար Հռոմն ուղար-  
կում էր միսիոնարներ, որոնք,  
ըստ ընկալեալ սովորութեան,  
վերադարձին մանրամասն տեղե-  
կազիր էին ներկայացնում իրենց  
ուղեւորութեան մասին : Այս մի-  
թից արդէն միջին դարերում Ա-  
րեւելիի մասին հարուստ գրա-  
կանութիւն էր հաւաքել, որ  
հետզհետէ աւելի եւ աւելի հա-  
րըստացաւ առեւտրականների,

միսիոնարների և զանազան պատ-  
ւիրակների ու դեսպանների կազ-  
մած տեղեկագրերով:

Երեսանի համալսարանի դա-  
սախօս Յուլի. Յակոբեանը մի  
բախտաւոր միտք է յղացել՝ քա-  
ղել ու հրատարակութեան տալ  
Եւրոպացի քանադարհորդների  
հաղորդած տեղեկութիւնները  
Հայաստանի եւ Անդրկովկասի  
մասին: Ներկայ գրախօսականի  
ստարկայ հանդիսացող հատորն  
է պ. Յակոբեանի այդ գործը, որ  
բաղկացած է հետեւեալ բաժին-  
ներից.

ա) Մոնղոլական շրջան, մինչև  
ժ.Գ դարի վերջը — Ռուբրուկվիս  
եւ Մարկո Պոլօ:

բ) Լէնկ Թէմուրի շրջան —  
Գոնգալէյ դէ կլաիլսօ:

գ) Թուրքմէնների շրջան՝  
Պարսկաստանում, Ատրպատա-  
կանում եւ Հայաստանում — վե-  
նետիկցի քանադարհորդների  
խումբը:

դ) Պարսկաստանը ժ.Զ դարում  
— գլխաւորապէս անգլիացի քա-  
նադարհորդների խումբը:

Պ. Յակոբեանի ընտրած հե-  
ղինակները ամենքն էլ շատ հե-  
տադրական են. քաղածքներ-  
ը, բացի առաջին բաժնից, ար-  
ւած են խիստ ընդարձակ եւ գրե-  
թէ սպառիչ: Նրա առած հրա-  
տարակութիւնները համարում  
են առաջնակարգ, այդ հրատա-  
րակութեանց ծանօթութիւնները  
օգտագործւած են հիմնութեամբ:  
Թարգմանութիւնը կատարւած է  
անգլիերէնից եւ կարելի է հա-  
մարել յաջող:

Գրախօսականի սահմաններում  
անհնար է երկար խօսել այս  
ստուար ու չափազանց արժէքաւոր  
գրքի մասին. այդ պատճառով ես  
կը սահմանափակւեմ միայն ա-

ռաջին բաժնով, այսինքն՝ մոն-  
ղոլական շրջանով:

Քաղածքներ անելու այն ձե-  
ւը, որ որդեգրել է Պ. Յակոբ-  
եանը, ինձ քաւում է մի քիչ պար-  
զունակ: Նա առնում է ամէն հե-  
ղինակից այն մասերը, որ յիշ-  
ւում են հայերն ու Անդրկովկա-  
սը, կամ որ քանադարհորդը  
անցնում է Հայաստանից եւ Ան-  
դրկովկասից: Չեմ կարծում,  
թէ այս ձեւը նպատակայարմար  
է: Բնականաբար, շատ հետա-  
քրքրական է տեսնել, թէ ինչ տը-  
պաւորութիւններ է կրել քանա-  
պարհորդը Հայաստանից ու հա-  
րեան երկրներից անցնելիս,  
բայց այդ տեղեկութիւնները  
այնքան աննշան են, յաճախ ա-  
նորոշ ու մութ եւ գրեթէ միշտ  
քիչ հետաքրքրական, որ հազիւ  
թէ էական բան աւելացնեն մեր  
գիտցածի վրա: Մինչդեռ այդ  
քանադարհորդների օրագրու-  
թիւնների գլխաւոր, եթէ չասեմ  
միակ արժէքը այն մասերի մէջ  
է, որ մերկացւած են ժողո-  
վուրդների ներքին կեանքին վե-  
րաբերող տեւայները, նրանց  
ներքին կազմակերպութիւնը,  
տիրող դասերի հետապնդած շա-  
հերն ու նպատակները եւ, որ ա-  
մենակարեւորն է, հասարակա-  
կան խաւերի եւ յաղթող ու պար-  
տած, այլ եւ շրջապատի ժողո-  
վուրդների փոխադարձ յարաբե-  
րութիւնները: Միայն արանց մէջ  
է քանադարհորդների գրածների  
գլխաւոր արժէքը, որովհետեւ,  
կրկնում եմ, այն սակաւաթիւ ու  
շփոթ տեղեկութիւնները, որ  
Հայաստանի ու Վրաստանի մա-  
սին տալիս են Մարկո Պոլօն եւ  
Ռուբրուկվիսը՝ մի առանձին  
արժէք չեն ներկայացնում: Նոյն  
խկ Ռուբրուկվիսի հաղորդած

վերին աստիճանի հետաքրքրական տեղեկությունը հայ վարդապետի եւ սրա շինած եկեղեցու մասին Մանգու-խանի բանակավայրի կողքին, կը մնայ բոլորովին անհասկանալի, եթէ ծանօթ չլինենք մոնղոլների ներքին կեանքի պայմաններին, նրանց դէպի այլազան կրօնները եւ ի մասնաւորի դէպի քրիստոնէութիւնն ունեցած վերաբերումին: Վերջապէս, հէնց այս վերջին հատածների ընթերցումը կը ստիպէ ընթերցողին մտածել առհասարակ մոնղոլների ֆակտագրի մասին, որ այնպէս անակնկալ ու տարօրինակ կերպով ազդել է ուրիշ ժողովուրդների ֆակտագրի վրա: Բոլոր այս հարցերին պատասխան չկայ պ. Յակոբեանի առաջ բերած կտորներէ մէջ, մինչդեռ նրա առած հեղինակների երկերում պատասխանը տրւած է:

Եւ, յիրաւի, ինչպէ՞ս պատահեց, որ այդ դեռ հարիւր տարի առաջ հեղ ու աննշմար հովիւ ցեղերը ԺԳ. դարում, յանկարծ, տէր դարձան գոթէ ամբողջ Ասիային մինչև Խաղաղական ովկիանոսի եզերքները, եւ Եւրոպային՝ մինչև Վիսլա գետը, անծայրածիր Ռուսաստանը վերածելով Պսկովի ու Նովգորոդի իռքրիկ հանրապետութեանց: Ապա նրանք ուղղւեցին դէպի հարաւ, անցան Կովկաս, Անդրկովկաս, Հայաստան եւ Սիւրիայի մի մասը\*): Իսկ վերջը նոյն այդ մոնղոլները պարսկեցին ու նահանջին իրենց իսկ նահանջ ժողո-

վուրդներից եւ նորից սկսեցին ապրել պարզ հովական կեանքով՝ երգերի եւ աւանդութիւնների մէջ միայն պահելով իրենց երբեմնի փառքի աղօտ յիշողութիւնները, թէեւ Չինգիզ-խանի յաջորդներից ոմանք դեռ երկար ժամանակ գրաւած պահեցին Պարսկաստանը, ուր նրանց տիրապետութեան տակ պարսից գրականութիւնը հասաւ զարգացման բարձրագոյն աստիճաններին:

Այս մոնղոլները հիանալի կազմակերպիչներ էին եւ հմուտ՝ նահանջ ժողովուրդները կառավարելու գործում: Վնական խտուրթամբ պահանջելով հանդերձ հպատակութիւն, հարկերի ու տուրքերի վճարում եւ ամէն տեսակ պարտականութիւնների կատարում՝ նրանք միաժամանակ գիտէին կատարեալ ներքին ազատութիւն տալ իրենց հպատակներին եւ միջամուխ չէին լինում բնաւ նրանց կրօնական գործերին: Այդ պատճառով մոնղոլների տիրապետութեան տակ գոնուղ երկրները ծաղկում էին:

Միանգամայն նիշտ է Գուդալիդի այն նկատողութիւնը, թէ «մոնղոլական նահանջների հետեւանքն եղաւ ցամաքային հանապարհների այնպիսի զարգացում, որպիսին այժմարի երբեք չէր տեսած: Դրա հետեւանքով, այն զարգացած տարրերը, որոնք այդ ժամանակաշրջանում քափանցել էին Միջին Ասիա, մշտական շփման մէջ էին իրար

\*) Յակոբեանը չի տւել նոյն իսկ Կարպինիի յատկագիծը: Կարպինին մանրամասնօրէն պատմում է Հայաստանի նահանջը մոնղոլներից:

հետ»\*) : Այդ զարգացած տարրերի մէջ էին նախ եւ առաջ ֆրիստոնեաները, առաւելապէս՝ նեստորականները, ապա՝ յակոբեանները եւ, վերջապէս, հայերը՝ ֆաղկեդոնցի թէ հակառակորդ : Հեռաւոր հարաւից եկած այս ֆրիստոնեաներն էին, սովորաբար առեւտրական նեստորականները, որ Մոնղոլիայում վաղուց ի վեր եւ լայնօրէն տարածել էին ֆրիստոնէութիւնը : Այսպէս, դեռ 1007 թւին կերպիտները ընդունել էին ֆրիստոնէութիւն : Սրանց պէտ Ուանգ-խանը, որ Եւրոպացիներին ծանօթ միջին դարերի **Prestre Jean** եւ արարների Մալէֆ Իւհաննան է, մեծապէս նպաստեց ֆրիստոնէութեան տարածման մոնղոլների մէջ : Շատ գիտնականների կարծիքով, նոյն իսկ հովիւ մոնղոլների զարթօնքը տեղի ունեցաւ գլխաւորապէս շնորհիւ այդ նեստորական վանառականների ու միսիոնարների պատմութեանց Մոնղոլիայից հեռու ընկած երկրների հարստութեան ու գեղեցկութեան մասին, եւ շնորհիւ այն մարգարէութեան, որ բերւած է եւ Յակոբեանի գրքում Մոնղոլիայի եկեղեցու պատմութեան մէջ, թէ՛ ֆրիստոնէութիւն ընդունելով մոնղոլները կը յաղթեն բոլոր ֆրիստոնեաներին : Թէեւ մոնղոլները շատ հեշտութեամբ էին ֆրիստոնէութիւն ընդունում, բայց նոյնքան հեշտութեամբ էլ թողնում էին իրենց բնաւորութեամբ նրանք խիստ անտարբեր էին դէպի կրօնական խնդիրները եւ սիրով ընդունում էին ամէն դաւանանք, որ այդ

վայրկեանին շահաւոր էր թւում :

Մոնղոլների այս վերաբերումը դէպի ֆրիստոնէութիւնը շատ հաւանական է դարձնում եւ Հեթում պատմիչի հաղորդած տեղեկութիւնը Մանգու - խանի ֆրիստոնէութիւն ընդունելու մասին, որի նշմարտութիւնը կասկածելի է համարում պ. Յակոբեանը (էջ 28), այն ինչ այդ բանը հաստատում է ոչ միայն վերեւ պատմածով, այլ եւ Մանգու-խանի բանակի կենտրոնավայրում ֆրիստոնէական, մասնաւորապէս հայկական եկեղեցու գոյութեան փաստով :

Ձի կարելի չցաւել, որ պ. Յակոբեանը բոլորովին անտես է արել Հեթում պատմիչին : Չեմ կարծում վերջինիս ծագումով հայ լինելու պարագան պատճառ պէտք է համարել, որ նրա գրքւածքն էլ դասի հայ հեղինակների գրածքների շարքին : Եւ լեզուն (հին ֆրանսերէն), եւ գրածքի նպատակը (ստիպել Պապին դուրս գալ ի պաշտպանութիւն հայերի), ինձ թւում է, պարտաւորեցնում են, որ Հեթումին համարենք եւրոպական հեղինակ : Բոլոր հեղինակներից Հեթումն առաջինն էր ըստ ժամանակի — Ռուբրուկիւսը գալիս է անմիջապէս նրանից յետոյ—որ ամենից աւելի հետաքրքրական տեղեկութիւններ է տալիս հայերի մասին, վերին աստիճանի լաւ ու նիշտ փաստեր է հաղորդում մոնղոլների մասին, գծում է այն ժամանակւայ մի շարք պետութիւնների ֆազաական կացութեան հարազատ պատկերը եւ մի արտակարգ հետաքրքրական

\*) *Kleine Schriften*, III, 609.

փաղափական ծրագիր է առաջարկում նոր խաչակիր արշաւանքի համար: Ըստ այս ծրագրի խաչակիրներին արևելքից պիտի աջակցէին մոնղոլները, իսկ կենտրոնից՝ դաշնակից Հայաստանն ու Վրաստանը: Այդ ծրագիրն, ի հարկէ, գլուխ չեկաւ, որովհետեւ նախ Պապը անգոր էր ստփի հանելու Եւրոպան Հայաստանի եւ Վրաստանի ազատութեան համար, իսկ երկրորդ՝ գլխաւորապէս այն պատճառով, զր հաշի չէին առնած Հայաստանի այն ժամանակայ պայմանները, նրանքին դասերի իրական փոխարարներութիւնները\*):

Վերջացնելով այս մի փանի դիտողութիւնները՝ ես պիտի փակեմ ինչով որ սկսեցի. պ. Յակոբեանը գեղեցիկ ծառայութիւն է մատուցել հայ ժողովրդին՝ հրնարաւորութիւն տալով ծանօթանալ արեւմտեան նամապարհորդների հաղորդած տեղեկութիւններին Հայաստանի մասին: Շատ ցանկալի է, որ այս լաւ եւ օգտակար գիրքը լայնօրէն տարածւի հասարակութեան բոլոր խտերում:

Յ. Զ.

« ԱՆԴՐԿՈՎԿ. ԽՈՐՀՐԴ. ԴԱՇՆ. ԸՆԿԵՐՎ. ՀԱՆՐ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ 1927 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆՆԸ », 1929, Թիֆլիս (ռուսերէն) :

Դրախօսականի համար քերես ուշ է այս հատորի մասին

խօսելը, բայց ի նկատի ունենալով, որ խորհրդային հրատարակութիւնները շատ դժարութեամբ են ստացում արտասահմանում, աւելորդ չենք համարում վեր առնել այս գրքի մի փանի կէտերը, որոնք այժմէական են եւ այսօրայ համար :

Շուրջ 400 էջոց մեծածաւալ այս հատորը լեցուն է փաստական նիւթերով, քւերով, վիճակագրական աղիւսակներով, որոնց մեծ մասն արդէն կորցրել է այժմէականութիւնը. կոլտոգր հիմնովին փոխել է Անդրկովկասի ժողովրդական տնտեսութեան կառուցածքն ու բնոյթը, եւ այն ինչ որ կար 1927ին՝ այլեւս հեռաւոր պատմութիւն է այսօր : Հետաքրքրական եւ այժմէական են գրքի միայն մի փանի մասերը, մեզ համար, մանաւանդ, այն էջերը, ուր խօսուում է Անդրկովկասի սահմանազնեների եւ նոր սահմանազնումների մասին :

Դուրս է գալիս, որ սուսիկփուսիկ տեղի են ունեցել նոր սահմանազնումներ, եւ Հայաստանի *գոյութիւն ունեցող սահմանները, նորից մկրատուել են յօգուտ հարեւանների* : « 1927թ. 20 յունիսին, կարդում ենք գրքում, Անդրգործկումին կից ըստեղծում է «Անդրկովկասի հանրապետութիւնների միջւ. հողային, անտառային եւ ջրաօգտագործման վէները լուծող մի յանձնաժողով» հետեւեալ կազ-

\*) Հեթումի գրածքը քարգմանած է Հ. Մկրտիչ Աւգերեանի կողմից — *Հեթում Պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842* : Դժբախտաբար, Աւգերեանը դուրս է ձգել թէ Հեթումի ծրագիրը եւ թէ, առհասարակ, գրածքի վերջին ամբողջ փաղափական մասը, որ մինչեւ այսօր էլ մնում է գրեթէ անմատչելի հայ ընթերցողի համար :